Լրագրությունը ՍԵՐ է՝ առանց արձակուրդի ու հանգստյան օրերի

-Առաջին հերթին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ջերմ հյուրընկալության և այն ուշադրության համար, որին արժանացել եմ Շչեցինի համալսարանում և այս հրաշալի դեպարտամենտում: Ես հիացած եմ այն ահռելի աշխատանքով, որ արվել է նման ռադիոստուդիա ստեղծելու համար, քանի որ նույնիսկ մեծ կապուղի և լայն սփռում ունեցող շատ ռադիոընկերություններ կարող են չունենալ այսպիսի հնարավորություններ: Համոզված եմ, նման ստուդիա ստեղծելու համար մեծ ջանքեր են պահանջվել: Ի՞նչն է Ձեզ մղել՝ անել դա:

-Իմ անունից և ամբողջ թիմի անունից շատ շնորհակալ եմ նման գնահատականի և հրաշալի խոսքերի համար: Ձեր այցը ոգեշնչող էր, և ուրախ եմ, որ հնարավորություն եք ունեցել վայելել մեր դեպարտամենտի աշխատանքային մթնոլորտը:

Դուք բերել եք լավ տպավորություններ և ապագայի պլաններ: Հուսով եմ, որ սա խթան կհանդիսանա Շչեցինի համալսարանի և Հյուսիսային համալսարանի միջև համագործակցության նոր հնարավորություններ ստեղծելու համար: NiUS Radio-ի, ինչպես նաև համալսարանական հեռուստատեսության ստեղծումը ուղղակիորեն կապված էին Շչեցինի համալսարանում մեդիա կրթության և ինտերակտիվության կենտրոնի ստեղծման անհրաժեշտության հետ: Մինչ տնօրեն դառնալս ես եղել եմ համալսարանի ռեկտորի լիազորված ներկայացուցիչը այս կառույցի ստեղծման և կառավարման համար: Իմ խնդիրն էր պատրաստել հայեցակարգ նման ստորաբաժանման գործունեության համար և սահմանել նպատակներ և զարգացման հեռանկարներ: Հայեցակարգը շատ հավակնոտ էր. հիմնական կետերից մեկը ժամանակակից և պրոֆեսիոնալ համալսարանական լրատվամիջոցների ստեղծումն էր, որի մեկնարկը տրվեց Շչեցինի համալսարանի ռադիոկայանով:

Այն գործարկելու համար ես ներդրել եմ ոչ միայն իմ ամբողջ լրագրողական փորձն ու կառավարման հմտությունները, այլ ամենից առաջ՝ իմ սիրտը: Ես պարզապես սիրում եմ ռադիոն. այնտեղ ես չեմ հաշվում ժամերը, չեմ զգում հոգնածություն: Ռեկտորի, ամբողջ

ռեկտորատի անդամների և իմ ամենամոտ գործընկերների աջակցության շնորհիվ մի քանի ամսվա ընթացքում մեզ հաջողվեց գրեթե զրոյից ստեղծել ամեն ինչ : Ես մտածեցի NiUS Radio անունը, հետո պատրաստեցինք լոգոն և համապատասխան գրաֆիկական հայեցակարգը, կառուցեցինք ինտերնետային պորտալ և սկսեցինք աշխատել հաղորդացանցի ստեղծման ուղղությամբ: Մենք արդիականացրինք ռադիոստուդիան և ներդրումներ կատարեցինք բարձրակարգ սարքավորումների մեջ՝ համակարգիչներ, խոսափողներ, ձայնագրիչներ, վահանակ, տեսախցիկներ և այլն: Ֆինանսական միջոցները կարևոր են, բայց ամենադժվարը ճիշտ թիմ կառուցելն ու խմբագրություն ստեղծելն է, այդ թվում՝ ուսանողական խմբագրություն: NiUS Radio-ի պաշտոնական մեկնարկը 2021 թվականի դեկտեմբերի 6-ին էր: Այսօր մեզ կարող են լսել ամբողջ աշխարհում՝ օգտագործելով մեր պաշտոնական կայքը, նաև՝ Android և iOS համակարգերով բջջային սարքերի համար նախատեսված հավելվածները: Գալով ենթակառուցվածքներին՝ ստեղծել ենք նաև ռադիոարտադրամաս, որտեղ անցկացվում են դասեր, պարապմունքներ, գործնական սեմինարներ և պրակտիկաներ: Լրագրության վարպետություն ընտրող մասնագետներին առաջարկվում են անհատական դասընթացներ և աշխատանքներ՝ մուլտիմեդիա գործիքներով, իհարկե, նաև՝ խմբագրական աշխատանք: Ռադիոյից հետո հաջորդ քայլը խմբագիր Բեատա Միկոլաևսկա-Վիեցզորեկի կողմից ղեկավարվող հեռուստատեսության ստեղծումն էր:

-Երբ ներս ես մտնում, անմիջապես զգում ես, որ այստեղ պրոֆեսիոնալ թիմ է աշխատում: Ինչպե՞ս եք ընտրում Ձեր թիմի անդամներին և ովքե՞ր կարող են միանալ ձեզ: Արդյո՞ք ստուդիան հասանելի է բոլոր ուսանողներին:

- Այո, ճշմարիտ է ասված, որ ռադիոն ստեղծում են մարդիկ: Ամենակարևորը թիմն է: Նրանք, ում հրավիրել եմ համագործակցության, հավատացել են իմ գաղափարին և ներգրավվել այս նախագծի մեջ: Սկզբում աջակցություն եմ խնդրել նաև Լեհաստանի լավագույն մասնագետներից՝ ձայնային ինժեներներից, SS ոլորտի մասնագետներից և տեխնիկներից: Մենք բոլորս ունեինք

մեկ նպատակ՝ լինել լավագույն ակադեմիական ռադիոկայանը Լեհաստանում. բայց մենք նաև ցանկանում ենք լինել պարզապես լավ ռադիո, որը հետաքրքիր առաջարկ կունենա Շչեցինի, տարածաշրջանի և երկրի բնակիչների համար: Մեզ սպասվում է երկար ճանապարհ և շատ աշխատանք: Մենք ոչ միայն խոսում ենք այն մասին, թե ինչ է կատարվում Շչեցինի համալսարանում, ոչ միայն ներկայացնում ենք մեր համալսարանի աշխատակիցների գիտական ձեռքբերումները, այլև դուրս ենք գալիս համալսարանական գիտակրթական շրջանակներից: Մեր ստուդիան հյուրընկալում է հետաքրքիր արվեստագետների, մարդկանց, ովքեր ստեղծում են, ստեղծագործում և հեղինակն են այն ամենի, ինչ կատարվում է Շչեցինում և ընդհանրապես, երկրում: Մենք շատ սերտ համագործակցում ենք սոցիալ-տնտեսական միջավայրի հետ: Մենք մասնակցում ենք գիտաժողովների, բայց նաև երաժշտական փառատոների, ցուցահանդեսների և թատերական ներկայացումների: Ունենք համատեղ նախագծեր այլ համալսարանների լրագրության ֆակուլտետների հետ, այդ թվում՝ արտասահմանյան: Սերտորեն համագործակցում ենք նաև Շչեցինի թատրոնների, նույնիսկ՝ ոստիկանության հետ: Բոլոր խնդիրները, որոնք մենք իրականացնում ենք, ունեն ընդհանուր հայտարար՝ լայն հասկացողությամբ մեդիա կրթություն և մեծ հնարավորություններ մեր ուսանողների համար՝ նոր շփումներ, նոր իրավասություններ, զարգացում և առաջընթաց: NiUS Radio-ում աշխատող մարդիկ պրոֆեսիոնալներ են և միաժամանակ՝ էնտուզիաստներ: Նրանք տարիներ շարունակ կապված են հանրային և կոմերցիոն ԶԼՄ-ների հետ: Նրանք կարող են աշխատել ոչ միայն խոսափողի առջև: Նրանք հիանալի են գրում, բայց նաև իրենց լավ են զգում մուլտիմեդիա աշխարհում: Պարզապես պետք է սիրել այս աշխատանքը: Թիմի համար ընտրում եմ մարդկանց, ովքեր չեն բավարարվում իրենց դափնիներով, ովքեր շարունակ ցանկանում են զարգանալ և ավելի լավը լինել: Մենք սովորում ենք միմյանցից և կիսվում մեր փորձով: Դա պատասխանատու աշխատանք է, բայց նաև պահանջկոտ և սթրեսային: Այո, քանի որ գործում ենք ժամանակի ճնշման ներքո, երբեմն դա կարող է սթրեսային լինել: Բարեբախտաբար, թիմում լավ մթնոլորտ է : Ժամանակ առ ժամանակ հայտարարում ենք աշխատանքի մրցույթներ, որոնց դիմում են

տարածաշրջանի մեդիա շուկայի հետ առնչվող մարդիկ: Մենք ոլորտում հմտանալու հնարավորություն ենք տալիս նաև մեր ուսանողներին: Մեզ մոտ պրակտիկա անցած ցանկացած ուսանող կարող է հետագայում միանալ մեզ: Կենտրոնում ունենք աշխատակիցներ, որոնց մենք սովորեցրել ենք այս մասնագիտությունը գրեթե զրոյից:

-Ուզում եմ պատկերացնել ձեր լսարանը. քանի՞ ուսանող է սովորում Շչեցինի համալսարանում, և ունե՞ք վիճակագրություն. քանի՞ ուսանող է ձեզ լսում:

-Մենք ամենաերիտասարդ ակադեմիական ռադիոն ենք Լեհաստանում, և միևնույն ժամանակ արդեն համեմատվում ենք նրանց հետ, ովքեր շատ ու շատ տարիներ են գործում շուկայում: Մենք շատ կարճ ժամանակում հասել ենք լավագույն արդյունքների, բայց դեռ դինամիկ զարգանում ենք: Մենք համեստ ենք մեր գործունեության մեջ: Մեր առաքելությունն առաջին հերթին ուսանողներին կրթելն է և Շչեցինի համալսարանի առաջխաղացումը՝ ձգտելով բարձր լսարանի և մեդիա դաշտում ներգրավվածության: Իհարկե, ես շատ ուրախ եմ, որ հետզհետե ավելի ու ավելի շատ մարդիկ են լսում մեզ, և ոչ միայն մեր համալսարանի հետ կապված մարդիկ: 2,5 տարուց պակաս ժամանակահատվածում մենք պատրաստել ենք ավելի քան 1000 հաղորդում, և մեր կայք այցելել է 200000 մարդ: Մեր յութուբյան ալիքում կա մոտ 350 տեսանյութ, քանի որ մենք պատրաստում ենք նաև հաղորդումներ՝ տեսաձայնային ձևաչափով: Մենք դարձել ենք ճանաչելի բրենդ ոչ միայն ակադեմիական ֆորումում, այլև Շչեցինում և նրա սահմաններից դուրս: Համալսարանի ուսանողներն ու աշխատակիցները մեր լսարանի մասն են: Ընդհանուր առմամբ, մեր ծրագրերով հետաքրքրված է մի քանի հազար մարդ:

Ընդհանրապես, Շչեցինի համալսարանն առաջարկում է կրթություն 80-ից ավելի ուսումնառության ոլորտներում. նաև կազմակերպում է կրթություն՝ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Իսկ մեր աշխատանքի ծավալը պատկերացնելու համար բավական է նշել, մեդիա կրթության դասընթացներն անցկացվում են ուսումնական գրեթե բոլոր ոլորտներում:

-Ի՞նչ ուղղվածություն ունեն ձեր ծրագրերը և արդյո՞ք հաշվի են առնվում ուսանողների հետաքրքրությունները ծրագրերն ընտրելիս: Կա՞ն դեպքեր, երբ ուսանողները գալիս են ստուդիա և առաջարկում այս կամ այն հաղորդումը պատրաստել:

- NiUS Radio-ի հաղորդացանցը ներառում է գիտության, մշակույթի և սպորտի վերաբերյալ հաղորդումներ, ինչպես նաև հարցազրույցներ և քննարկումներ փորձագետների հետ. ունենք նաև գիտահանրամատչելի բաժին: Մենք ապահովում ենք 6 ժամյա ուղիղ հեռարձակում: Ներկայացնում ենք նորություններ՝ լեհերեն, անգլերեն և ուկրաիներեն: Մեր գործունեության անբաժանելի մասն է www.niusradio.pl կայքը, որը մեծ տարածում ունի:

Մեզ մոտ եկող ուսանողները կարողանում են հենց այստեղից սկսել իրենց՝ լրագրողի ճանապարհը: Նրանք գալիս են տարբեր գաղափարներով և հնարավորություն են ստանում դրանք իրականացնել մասնագետների հսկողության ներքո: Երբեմն ուզում են սկսել ռադիոյից, բայց չգիտեն՝ որտեղից սկսել: Խոսում ենք, լուծումներ և որոշակի թեմաներ առաջարկում: Բոլորը չէ, որ պետք է ելույթ ունենան խոսափողի առաջ: Ռադիոյի կայքում ներկայացնում ենք նաև գրավոր հարցազրույցներ, ակնարկներ, պատմություններ և տեքստային ռեպորտաժներ: Եթե ինչ-որ մեկը կարողանում է լուսանկարել, ապա հնարավորություն ունի ներկայացնելու դրանք: Եթե ինչ-որ մեկը հետաքրքրված է գրաֆիկայով կամ կինոյով, կարող է նաև փորձել մեզ մոտ: Մենք ապրում ենք լրատվամիջոցների սերտաճման դարաշրջանում: Ռադիոն այսօր բոլորովին այլ է, քան երկու տասնամյակ առաջ: Բոլորը կարող են հետամուտ լինել դրան: Ուրախ եմ, որ պրակտիկա անցած երիտասարդները ցանկանում են ավելի երկար մնալ մեզ հետ: Եթե որոշում են փորձել իրենք իրենց և աշխատել այս մասնագիտությամբ, ապա այս վայրը հենց իրենց համար է:

- Ունե՞ք համագործակցություն այլ ռադիոընկերությունների հետ :

-Իհարկե, մենք անընդհատ նոր կապեր ենք հաստատում և հետաքրքիր նախագծեր իրականացնում ոչ միայն ռադիոկայանների հետ: Վերջին մի քանի ամիսների ընթացքում մենք

համագործակցության հուշագրեր ենք ստորագրել Լվովի ազգային համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ: Մեր թիմում ունենք ուկրաինացի գործընկերներ, նաև՝ առցանց մասնակցում ենք Ուկրաինայի համալսարանների կողմից կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին: 2024 թվականի մայիսին մենք նախաձեռնել ենք միջազգային սեմինար՝ նվիրված քաղաքացիական լրագրությանը և ժողովրդավարական գործընթացներին, որին հրավիրելու ենք լրագրողների Լեհաստանից, Գերմանիայից և Ուկրաինայից: Մենք հյուրընկալել ենք ԲիԲիՍի, Ռոյթերս, Դոյչե վելե, Ֆրանկֆուրտի և Լեհաստանի ռադիոընկերությունների հետ կապված մասնագետների: Վերջերս մեզ այցելել էին նաև Քենիայի Մոմբասայի համալսարանի ներկայացուցիչներ: Առաջիկայում համագործակցության պայմանագիր կկնքենք Գերմանիայի համալսարանի հետ: NiUS Radio-ի և UNIWIZJA-ի պատրաստած նյութերը հեռարձակվում են նաև պետական հեռուստատեսությամբ և ռադիոյով: Ուզում եմ զարգացնել մեր համագործակցությունը մեդիա ոլորտի այլ սուբյեկտների հետ, որպեսզի կարողանանք փոխադարձ օգուտներ քաղել:

-Կարո՞ղ ենք ասել, որ այս ստուդիայի միջոցով ստեղծում եք ռադիոլրագրողների Ձեր դպրոցը: Եթե այո, ապա լրագրողի ո՞ր հատկանիշներն են Ձեզ համար ամենակարևորը և առաջին հերթին ի՞նչ եք սովորեցնում Ձեր ուսանողներին:

- Մենք շեշտը դնում ենք ոչ թե պրակտիկայի, այլ տեսության վրա: Առաջին հերթին ուսանողներին դասավանդում ենք լրագրություն, սոցիալական մեդիա, ԶԼՄ հաղորդակցություն և կառավարում: Կենտրոնում աշխատող մարդիկ դասախոսություններ են կարդում նաև այլ ոլորտներում: Հրաշալի կլիներ, եթե մեր հանձնառությունն ու աշխատանքի վերջնարդյունքներն ապագայում սահմանվեին որպես «ռադիոլրագրողների դպրոց»: Ես հպարտ եմ, որ մեզ հաջողվել է այս կարճ ժամանկահատվածում կրթել մասնագետների, ովքեր ավարտելուց հետո աշխատանք են գտել ոչ միայն Շչեցինի համալսարանի լրատվամիջոցներում: Դասերի ժամանակ փորձում եմ մարդկանց վարակել լրագրողի մասնագիտության հանդեպ սիրով, ցույց տալ, որ այն կարող է մեծ բավականություն պատճառել: Դա ոչ

միայն մասնագիտություն է, այլև առաքելություն: Ես միշտ ասում եմ, որ նրանք, ովքեր ցանկանում են ապագայում ծառայել հասարակությանը և նպաստել ճշմարտության հաստատմանը, պետք է առաջնորդվեն լրագրողական էթիկայով: Ինձ համար ամենկարևոր սկզբունքներն են լրագրողի օբյեկտիվությունն ու անաչառությունը, ժողովրդավարական արժեքների պաշտպանությունը, կողմնակալությունից խուսափելը, տեղեկատվության վստահելի ստուգումը և զրուցակիցների վկայությունները, նյութերի բարեխիղճ ձեռքբերումը. հարգանքը՝ անձնական կյանքի և մարդկային արժանապատվության նկատմամբ, պատասխանատվությունը՝ սեփական խոսքի հանդեպ, վերջապես՝ կոռուպցիայի կանխարգելումը: Ինչ վերաբերում է գործնական հմտություններին, ես տալիս եմ իմ ողջ փորձը, որը շատ կարևոր է այս մասնագիտության մեջ: Երանի մի օր իմ ուսանողները ինձանից լավը լինեն: Ես միշտ հիշեցնում եմ նրանց, որ այս ամենում անհրաժեշտ է նաեւ համեստություն և չեմ զլանում կրկնել՝ դու լավն ես այնքան, որքան քո վերջին ծրագիրը:

-Կխնդրեի պատմել Ձեր մասնագիտական գործունեության մասին, ի՞նչ ճանապարհ եք անցել մինչ այս ռադիոկայան հասնելը:

-Իմ ճանապարհը երկար էր, խորդուբորդ, բայց և շատ գոհացուցիչ: Ես սկսել եմ աշխատել ԶԼՄ-ներում շատ վաղ, երբ 18 տարեկանից մի փոքր ավելի էի: Ես սիրահարվեցի ռադիոյին՝ չիմանալով, որ դա լինելու է սեր՝ ողջ կյանքի համար, սեր՝ առանց արձակուրդի ու հանգստյան օրերի:

Ուսումնառությանս 5 տարիների ընթացքում ես կապված էի Զիելոնա Գուրայի «Ռադիո Զախոդ»-ի հետ, և Շչեցինի ռադիոյում մագիստրոսի կոչում ստանալուց հետո անցա բոլոր աստիճաններով՝ թղթակից, հրատարակիչ, ռադիոհաղորդավար, հրապարակախոս և վերջապես՝ ղեկավար: Ուսմանս ընթացքում համագործակցել եմ նաև ազգային լրատվամիջոցների հետ՝ թե՛ թերթերի, թե՛ այլ խոշոր ռադիոկայանների: Ժամանակ առ ժամանակ հայտնվում էի նաև հեռուստաթերում, թեև կապույտ էկրանը երբեք իմ երազանքը չի եղել: Այդ ընթացքում գրել եմ 10 գիրք, ստացել մի քանի արժեքավոր մրցանակներ և պաշտպանել դոկտորականս: Այսինքն, ես նաև

գիտությամբ եմ տարված: Ավելի քան 20 տարվա լրագրողական աշխատանքից հետո ինձ անհրաժեշտ էր որոշակի փոփոխություն և ադրենալին: Ուզում էի ինչ-որ բան փոխել կյանքումս՝ չհեռանալով իմ մասնագիտությունից: Եվ սկսեցի զարգացման նոր հնարավորություններ փնտրել, այնպիսի մի բան, որից բավականություն կստանամ:

Ու քանի որ սիրում եմ մարտահրավերներ, որոշեցի հեռանալ իմ աշխատանքից՝ Ռադիո Շչեցինից և ապագաս նվիրել Շչեցինի համալսարանին: 2021 թվականի ապրիլին դարձա ռեկտորի՝ պրոֆ. Վալդեմար Տարչինսկու լիազոր ներկայացուցիչը՝ Մեդիա կրթության և ինտերակտիվության կենտրոնի ստեղծման և կառավարման համար: Այնուհետև, ես հորինեցի նաև NiUS ռադիոն՝ դառնալով դրա տնօրենը: Սա միայն կոնցեպտուալ, միայն անհատական կամ թիմային կառավարման աշխատանք չէ : Այստեղ ամեն ինչ միաձուլված է: Ինձ հաճախ կարող եք լսել եթերում կամ տեսնել իմ անունը՝ որպես տեղեկատվության հեղինակ: Ես ամեն կերպ փորձում եմ աջակցել թիմին, բայց ճշմարտությունն այն է, որ ինձ դեռ դուր է գալիս այս աշխատանքը: Ես կախվածություն ունեմ խոսափողի առաջ խոսելուց:

-Ի՞նչ ձեւաչափով եք պատկերացնում Ձեր ռադիոստուդիայի համագործակցությունը այլ բուհերի, մասնավորապես Հյուսիսային համալսարանի հետ:

- Իհարկե, մենք միասին պետք է հայեցակարգ և բանաձեւ մշակենք: Կարծում եմ, որ մեզ կապող ծրագրերը և ֆորմալ համագործակցությունը պետք է ճանապարհ բացեն դեպի ուսանողական կրթություն՝ լրագրության ոլորտում՝ ապահովելով այնպիսի որակ, որ շրջանավարտներն սկսեն իրենց կարիերան՝ հիանալի պատրաստված լինելով դրան: Համագործակցելով արտերկրի համալսարանների հետ՝ մենք փորձում ենք ուսանողներին, ասպիրանտներին, գիտաշխատողներին և լրատվամիջոցների աշխատողներին հնարավորություն տալ դիմել մեզ լրագրողական պրակտիկայի համար՝ օրենքով սահմանված կարգով: Առկա կամ հիբրիդ ձևաչափով կազմակերպում ենք մեդիա և գիտական միջոցառումներ՝ սեմինարներ, գիտաժողովներ՝ նպաստելով

ուսանողների, դասախոսների և լրագրողների ստեղծագործական առաջընթացին և ապահովելով մեր առցանց հարթակներում նյութերի և մեդիա բովանդակության տարածման հնարավորություն: Մի խոսքով՝ իրականացնում ենք համատեղ մեդիա նախագծեր և նախաձեռնություններ՝ ժամանակակից չափորոշիչներին և հաղորդակցության տեխնոլոգիաներին համապատասխան: Օրինակ, մեր հաղորդումները հեռարձակվում են կամ կարող են հեռարձակվել Լվովի համալսարանի ռադիոյով, իսկ մենք մեր հերթին գովազդում ենք ՖՐԱՆԿՕ TV-ի նյութերը: Շատ հնարավորություններ կան, և ես վստահ եմ, որ մենք կմշակենք մեր մոդելը, որպեսզի շուտով պաշտոնականացնենք համագործակցությունը Հյուսիսային համալսարանի հետ:

-Արհեստական բանականությունը սկսել է փոխարինել բազմաթիվ մասնագիտությունների: Այսօր, արհեստական բանականության միջոցով սկսել են նաև նորություններ գրել, սցենարներ ու հոդվածներ մշակել: Ի՞նչ կանեք, եթե մի օր այն սկսի մշակել ամբողջական մեդիա բովանդակություն մեր՝ լրագրողներիս փոխարեն:

- Արհեստական բանականությունը կարող է շատ օգտակար լինել, երբ խոսքը վերաբերում է ջինգլների պատրաստմանը, ձայնային աշխատանքին կամ առանձին հեռարձակումների երաժշտական կարգավորումներին: Այսինքն, այն կարող է լինել շատ օգտակար գործիք, երբ օգտագործվում է խելամտորեն: Կա, իհարկե, մետաղադրամի հակառակ կողմը՝ շատ ավելի մութ: Մեդիա բովանդակության մշակում, կեղծ լուրերի ստեղծում, սոցիալական բոթեր, ապատեղեկատվություն և այլն: Սա տեղի է ունենում մեր աչքի առաջ. ստեղծվում են կեղծ տեղեկություններ տարածող բազմաթիվ ալգորիթմներ՝ օգտագործելով արհեստական բանականությունը: Բայց հուսով եմ, որ ռոբոտները մեզ ամբողջությամբ չեն փոխարինի:

Ի վերջո, ռադիոն առաջին հերթին վերաբերում է անձին և մարդկանց, այլ ոչ թե հոլոգրաֆներին: Նույնիսկ ամենակատարյալ մեքենան չի կարող փոխարինել մարդուն: Դե, իսկ եթե սխալվում եմ, կուզենայի, որ այս հեղափոխությունը շատ արագ տեղի չունենա:

-Հարգելի՛ պրոֆեսոր, շատ շնորհակալ եմ հետաքրքիր զրույցի համար: Իհարկե, ոչ մի արհեստական բանականություն չի կարող փոխարինել մարդկային ջերմ հարաբերություններին և այն դրական զգացողություններին, որոնք ունեցել եմ Ձեր և Ձեր անձնակազմի հետ շփվելիս:

Համոզված եմ՝ այս օրերի մեր համատեղ աշխատանքի մշակույթը կպահպանվի նաև մեր համալսարանների հետագա համագործակցության ընթացքում: